

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հ.Բ.Ռ.ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿԸ ԿԱՌՈՒՑԱՆՔ ԺԱՌՆԴ. ԵՒ ԸՆԾԱՑԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ

Հ. Բ. Ռ. Միութեան Վահ-
մաչուք Նախագահ Տիար Աղեքս
Մանուկեան, 1963 Հոկտեմբերի
երուսաղէմ իր այցելութեան
առթիւ, խոստացած էր տանձ-
նել ժառանգաւորաց և ընծայա-
րանի նոր չենքի մը կառուցումը:

Պատրիարք Սրբազն Հօռ
1964 Մեպտեմբերի Նիւ նորք այ-
ցելութեան, մեծարգոյ Նախա-
գահը վերջականապէս յանձն
առաջ կրթական մեծ հաստա-
տութեան մը բարերարութիւնը,
Պատրիարքարանին տրամադրե-
լով նիւթական անհրաժեշտ մի-
ջոցները:

Այժմ արդէն իսկ պատ-
րաստուած է կառուցուելիք ուս-
ման մեծ այդ կեդրոնին ու յա-
րակից չենքերուն ընդհանուր
յատակագիծը, և շինարարութեան աշխատանքները կը սկսին մօտ ատենէն:

Մնած 1901-ին, իդմիրի 1920-ի աղէտէն անմիջապէս ետք Տիար Մա-
նուկեան կապատանի Ամերիկա, ուր, չնորիւ իր փայլուն ժաքին, անխոնջ
աշխատանքին և յարատեւութեան ոգիին՝ կը տիրանայ ամենափայլուն դիբ-
քի, դանալով Ամերիկահայութեան ամենէն կարկառուն գէմքերէն մին:

Ինչ որ սակայն կը կազմէ գեղեցկագոյն յատկանիշը Տիար Մանուկ-
եանի՝ Ամերիկահայ ազգային ու ընկերային կեանքն ներս իր ունեցած ա-
մենէն ազնիւ ու միաժամանակ յոյժ օգտակար գործունէութիւնն է. գործու-
նէութիւն մը՝ որ կը տարածուի յիսուն տարիներու վրայ: Կեանք մը ամ-
բողը:

Տիար Մանուկեանի անձնական անդուլ ճիշերուն և անհատական օրի-
նակին արդի՛մք է առաւելաբար Տիթրոյթի Հայ կեդրոնին հոյակապ չենքը,
ինչպէս նաև նոյն քաղաքի նորակառոյց եկեղեցին:

Որպէս երկարամեայ անդամ Ամերիկայի Հայ եկեղեցւոյ Երեսփոխա-
նական ժողովին, մեծ է եղած Տիար Մանուկեանի գերը Միացեալ Նահանգ-
ներու հոծ Հայ զաղութիւն ներս՝ համերաշխալութեան եղբայրական ոգիի մը
ստեղծումին և համայնքային գործերու անխոչնդուու ընթացքին առնչու-
թեամբ:



իշխանական ու առաստաձեռն իր բարերարութիւններուն չնորհիւ է որ Միացեալ Նահանգներու Հայ գաղութէն ներս ծառայող բազմաթիւ հոդեւորականներ միջոցն ու պատեհութիւնը ունեցած են հետեւելու Ամերիկան զանազան Աստուածաբանական գարժարաններու դասընթացքներուն:

Սակայն Տիար Ալեքս Մանուկեանի հանրային գործունէութեան փառապահը կը կաղմէ վատահարար ա՛յն անձնանուէր ու արդինաշատ ծառայութիւնը՝ զոր տարիներով մատուցած է և կը շարունակէ ընծայել աղդապարծան մեծ կազմակերպութեան՝ Հայկական Բարեկործական Ընդհանուր Միութեան: Մօտաւորապէս քանի տարիներ առաջ, գլխաւորաբար Տիար Մանուկեանի անդուլ ջանքերուն չնորհիւ վերակենացնացած է Միութեան Տիթրոյթի Մասնաճնուղը, որ ցարդ ամենէն գովիլի և օգտակար գործունէութիւն մը ունեցած է Հայաշատ այդ զաղութէն ներս: Եկեղեցանապատ կամ ազգային որեւէ Հանգանակութեան առիթով, Տիթրոյթի համայնքը իր մասնակցութիւնը բերած է առաւելագոյն չափով մը, իսկ յանձնի՝ իրմէ ավելացուածն ալ գլել-անցնելով: Այսպէս էր որ, Հ. Բ. Բ. Միութեան կողմէ կաղմակերպուած Պատերազմի Աղէտալիներու, Կարօտեալիներու, Ներգաղթի և Դպրոցաշինութեան Հանգանակութիւնները Տիթրոյթի մէջ մեծագոյն յաշութեամբ արդինաւորուած են:

Տիար Մանուկեան աւելի քան քանի տարիներ անդամակցած է Բարեգործական Միութեան կեդր. Վարչ. Ժողովին, և 1953-ի Դեկտեմբերէն ի վեր կը վարէ Միութեան Նախազահութիւնը ամենէն կատարեալ կերպով ու մեծ ձեռնահասութեամբ: Ու իր ազգին ընծայաբերած գուշողութեան չափը գէթ մասամբ ծանօթացուցած կ'ըլլանք, երբ յիշենք թէ Տիար Մանուկեան, իր ազգուուտ գործունէութիւնն գոււր՝ Նախազահն ու Վարիչն է Ամերիկայի զանազան կողմերը հաստատուած եօթ ընկերութիւններու:

Իր կատարած բարերարութիւններուն ընդհանուր գումարը կ'անցնի կէս միլիոն տողարը, յատկացաւած ընդհանուր առմամբ եկեղեցական ձեռնարկներու: Այս բարերարութիւններու թաղն ու պսակը կը կաղմէ անվարան այն անհախընթաց նուիրատուութիւնը՝ որով պէտք կառուցուի նրաւաղէմի նոր Դպրեվանքը՝ զառնալու Համար Հայաստանեայց Եկեղեցիք զինուորեալ պաշտօնեաններուն դաստիարակութեան և լուսաւորութեան վասարանը:

Ն Ամենապատաստութիւն Պատրիարք Սրբազն Հայրը, բարձրօրէն զնահատելով Տիար Ալեքս Մանուկեանի եկեղեցահուէր ու աղջօդուտ ծառայութիւններն ու բարերարութիւնները, նիւ Եսորքի մէջ, 1964-ի Սեպտեմբեր 28-ին զայն պարզեւարեց Ս. Յարութեան աղամանդակուու շքանշանով:

«Երանի որ ունիցի յիշատակ ի Սին»: